


ՄԱՍԻՆ ԳԵՂԱՐԱՆՈՒԹՅԱՆ ԶԵՆՈՒԹՅՈՒՆ




Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարեկան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ.
Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տ է Լ Է Փ Օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)
Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.
Ցայտարարութիւնների համար վճարում են
խրաւրանիւր բառին 2 կոպէկ.
Տ է Լ Է Փ Օ Ն № 253.

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻՎԱԾ 1899 ԹԻՎԱՆԻ



(27-րդ ՏԱՐԻ)

ԴՐԱՎԱՆԱԿԱՆ ԵՒ ԲԱՆԱԿԱՆ ԼՐԱՅԻՐԻ

«ՄՇԱԿԸ» ԿԸ ՀԻՍՏԱՐԱԿՎԻ ԴՈՅՆ ՊՐՕԳՐԱՄԱՐՈՎ ԵՒ ԴՈՅՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՄ. «Մ» չափի տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ և տասն ամսականը՝ 9 ռ., ինն և ութ ամսականը՝ 8 ռ., եօթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝ 6 ռ., հինգ ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ. և մի ամսականը՝ 1 ռուբլի:
ԱՐՏԱՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ա մ ե ռ ի կ ա յ ի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 ղոլարը. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի:

«ՄՇԱԿԻՆ» գրվել կարելի է ԽՐԱՎԱՆԱԿԱՆ ԵՒ ԲԱՆԱԿԱՆ ԼՐԱՅԻՐԻ (Բարձրագույն փողոցների անկիւն):
Կայտարարութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար, և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция „МШАКЪ“; իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien „MSCHAK“.

Ցայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով:
Ա Պ Ա Ռ Ի Կ Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ւ Ն Զ Է Ը Ն Դ Ո Ւ Ն Վ Ո Ւ Մ

ԲՈՎԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Յարգանք դէպի անձնաւորութիւնը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ազնիւ քալ. Նամակ երևանից. Նամակ Հին-Նախիջևանից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Գոռարութիւնները Թիֆլիսայում. Նամակ—Թիֆլիսայից. Արտարկի լուրեր.—ԽԱՌԻՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՆՈՒԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Իմ տրպանութիւններից:

ՅԱՐԱՆՔ ԴԵՊՈՒ ԱՆՁՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Տարիներ շարունակ մեր հասարակութեան լաւագոյն մասը կաւել էր մղում ծեծի դէմ դպրոցների մէջ և նա կարողացաւ արմատախիլ անել միջնադարեան պատժի այդ վիրաւորական ձևը: Բայց մնաց մի մեծ ասպարէզ, մի ընդարձակ աշխարհ, ուր ծեծը դեռ թագաւորում է, ուր մարդկային անձնաւորութիւնը են-

թարկվում է այդ անարդար և ստորացնող պատժին—դա մեր ժողովրդի մեծամասնութեան կեանքն է, մեր հազարաւոր գիւղերն են: Այնտեղ դեռ ծեծը չէ վերջացրել իր իշխանութիւնը և ոչ ոք երաշխաւոր չէ, որ նա ազատ է այդ ձեռքի խայտառակութիւն և անպատուութիւն ընդունելուց: Ծեծում է տանուտէրը, ծեծում է շինական դատաւորը, ծեծում է հարստացած գիւղացին, ծեծում է գզիրը, ծեծում է ամեն մի մարդ, որ փոքր ի շատ է ոյժ և իշխանութիւն է զգում իր մէջ. իսկ վիրաւորանք ընդունողը ծեծում է իրանից աւելի թշուրի, իր զաւակներին, իր կնոջը, իր խղճ հարեանին և սպասում է, որ մի օր ինքն էլ ուժեղանայ և հարստանայ, որ կարողանայ ծեծել իրան վիրաւորողին և խայտառակողին: Ամօթ է ժողովրդի համար՝ չը կարողա-

նալ իր կեանքի մէջ վերջ դնել անձնաւորութեան արժանաւորութիւնն ստորացնող վարմունքներին: Ամօթ է մի ժողովրդի համար, որի անդամները կամ ծեծողներ են կամ ծեծվողներ: Թէ՛ առաջին և թէ՛ երկրորդ դրութիւնը խայտառակող են: Ամեն մարդ, որի համար թանկ է ժողովրդի բարոյական առաջադիմութեան զործը, որը ցանկանում է զարգացնել պատուասիրութեան զգացմունք ժողովրդական մասացի մէջ, պէտք է զինվի ասիական այդ ժառանգութեան դէմ և արմատախիլ անի նրան մեր կեանքից: Ծեծված մարդը ինքն ընկնում է իր աչքում, կորցնում է իր հեղինակութիւնն ու պատիւը իր ընտանիքի և բարեկամների շրջանում: Նա լցվում է զայրոյթի և վրիժառութեան զգացմունքով, որոնք սպասում են յարմար առիթի մի օր դուրս ցայտելու և իրանց ամբողջ ոյժով պայթելու: Փոխադարձ վիրաւորանքները յաճախ պատճառ են եղել գիւղական բազմաթիւ ընդհարումների և անկեղծանալի թշնամութիւնների:

Գնահատելով կուսենայ ծեծը, նրա հետ միասին գոյութիւն կը պահպանի անհատական պատուի և արժանաւորութեան վտանգված վիճակը: Իսկ յոյս ունենալ, որ մի ժողովուրդ այդ վիճակում կարող է զարգանալ իր մէջ ասպետական զգացմունքներ, որ նա կարող է կազմակերպել ընտանեկան և ընկերական կեանք խելացի հիմունքներով, նշանակում է ջրհորքներով դրադիւր: Այնտեղ, ուր ծեծ կայ, այնտեղ դեռ կոպտութիւն է տիրում, այնտեղ զգացմունքների նրբութիւններն ու ընթերցմանը դեռ անհասկանալի են: Ցատուկ հաստատութիւններ են հիմնվում կենդանիներին հովանաւորելու և ծեծից ու վատ պահպանելուց ապահովելու նպատակով, իսկ ժողովրդական մասացի մէջ դեռ ասպարէզված չէ մարդկային անձնաւորութիւնը կոպտ և անկայել վարմունքներից:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ԱՋՆԻԻ ԲԱՅԼ

Պետերբուրգի լրագրիներից մէկում, «МОСКОВСКАЯ ВѢДОМОСТЬ» լրագրի մի աշխատակից բողո-

քում է այն ուղղութեան դէմ, որին հետևում են ռուսաց պահպանողական շովինիստ լրագրիները, որոնց մէջ առաջնութեան պատիւն անշուշտ վայելում է Մոսկվայի համալսարանական օրդանը: Այդ աշխատակիցը երկար ժամանակ դրել է Գրինգուոտի լրագրի մէջ, բայց այժմ, տեսնելով որ անհնարին է հաջովել նրա բռնած ուղղութեան հետ, հեռացել է խմբագրութիւնից: Նա ասում է, որ լինելով պահպանողական, դաւանելով ռուս պահպանողականների սկզբունքները, չէ կարելի չը վրդովվել այն ուղղութիւնից, որին հետևում է Գրինգուոտը: Բերած փոխադրութիւնը մէջ ամենահետաքրքրականն այն է, թէ ինչ տեսակ ուղղութիւն պիտի բռնէ ռուս պահպանողականը դէպի պետութեան ծայրերում ապրող ազգութիւնները: Փառնակակից հանդամարներն ի նկատի առնելով, յօդուածագիրը այն եզրակացութեան է հասնում, որ Գրինգուոտի բռնած դիրքը այնքան փաստակար է, որ ոչ ոք չէ կարող համակրել նրան: Եւ ասա ինչպէս:

«МОСКОВ. ВѢД.» լրագրի վարիչները իրանց համար մի որբազան պարտականութիւն են համարում շարունակել այն ուղղութիւնը, որ մտցրել է Կատկով: Բայց նրանք միանգամայն ժողացու թեան են տալիս, որ այլ էին Կատկովի ժամանակները, այլ էին այն հանդամարները, որոնք համբաււոր ռուս պահպանողական հրապարակախօսին ուղղութիւն էին ցոյց տալիս: Այժմ նոր հոսանքներ, նոր պահանջներ են առաջացել. բայց Կատկովի յաջորդները, չունենալով նրա հոռաւորութիւնը, ընդունակութիւնները, շարունակում են գնալ նրա գծած շաւղով, մինչդեռ, հաւատարմի մնալով պահպանողական ուղղութեան, այժմ հարկաւոր էր ոչ թէ կուրքէն հետևողութիւն, այլ անկախ գործունէութիւն: Յօդուածագիրը, անցնելով այդ հարցից ուրիշ, բռն ռուսական հարցերին, ցոյց է տալիս, թէ ինչ վերդովեցուցիչ ուղղութիւն էր բռնել Գրինգուոտ սովատանը ռուս գիւղացիների վերաբերմամբ և ինչպէս ստիպված էր փոփոխել իր դիրքը, կողմնակի ներշնչումներից ստիպված: Դուրս է գալիս, որ պահպանողական լրագիրը նեղութեամբ, անվայել է ոչ միայն ալլազիկների, այլ և բուն ռուս ժողովրդի վերաբերութեամբ: Եւ իրաւ, այդ յատկութիւնը գտնում ենք այն բոլոր խոշոր ու մանր գործիչների մէջ, որոնք ուղղում են աշակերտել Մոսկվայի պահպանողական լրագրին:

Մեր միտքը, ի հարկէ, այդ տեսակ մամուլի բարոյական արժանաւորութիւնների մի ամբողջական խորթ է երևում արևմտ դանակը կանայի քննող ձեռներում միւր կարատելիս. բայց դա նրա պարագլուխն է, նրա ապրուստի պատուաւոր միջոցն է: Ազգիկը ընտանիքի մէջ աշխատանքի տեսակետից նոյնքան է գնահատվում, որքան և աղան. նա էլ վարձվում է մագաղաններում, տնէրում, օրհարաններում և իր ապրուստը ճարում առանց ծնողների վրա ծանրանալու: Ինչ ասել կուզի, որ բազմաթիւ տղա-խոյր պայմաններ դառնացնում են այդ աղիկների կեանքը. իրանց յանձն առած աշխատանքների ընթացքում նրանք առողջութեան հետ շատ անգամ կորցնում են նաև իրանց պատիւը, բայց և այնպէս, նրանք զերպատում են իրանց սեփական աշխատանքով ձեռք բերած մի կտոր հացը իրանց մեծաւորների ժողովածի:

Հետաքրքիր են դիւզայի կանայք, դրանք զանազան պտուղներ, կանայեղէններ, ձեռադործներ, կամ կաթ, խոյ, պանիր բարձում են փոքրիկ սպլախների վրա, յծում են մի եզ մի կով, մի ձի, մի ջորի և մենակ քլում են՝ քաղաք գալիս, կամ շատ անգամ, եթէ սայլակը փոքրիկ է, և բեռը թեթիւ, իրանք են քաշում բերում: Այստեղ փոքրիկ վրան են տնկում մի հրապարակում, մինչև երեկոյ վաճառում բերած իրերը և երեկոյան մի լրագիր գնում են նստում սայլակի վրա ու կարգաւորվում տուն են վերադառնում: Եվ ինչպե՞ս են իրանք իր ամեն տեսակ աշխատանքների մէջ միշտ զարմանալի գործնակալ է. նրա բոլոր գործողութիւնները, բոլոր քայլերը, ասես թէ, կատարվում են որոշ ծրարով, նախատեսված խորհրդով: Նայեցէք նրա զլխարկին, մի

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԻՄ ՏՊԱՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

II

Շվեյցարացու ուրախութեան, զուարճութիւնների և աշխատանքի ժամերը խտտութեամբ ուրողված են. մէկը միւսին չէ խանգարում: Լի օրերը՝ առաւօտից մինչև երեկոյ փողոցներում, հրապարակներում պարապ մարդ զուարէ կը ճարվի. ոչ տարիքը, ոչ հասարակական դիրքը այստեղ մարդուն իրաւունք չեն տալիս պարապ օրեր անցկացնել. ամենքն աշխատում են, ամենքը պարագլուխը ունենւն Կենսական միջոցներ թանգութիւնը, գոյութեան կուրն ստիպում է ամենքին անաղար աշխատել՝ առաջ բերելով մի կատաղի մրցութիւն արդիւնաբերութեան, արուեստների բոլոր ճիւղերի մէջ: Մէկը միւսին վրա չէ ծանրանում, մէկը միւսի աշխատանքին աջ չէ անկել: Նոյն իսկ մեծաւորները, եղբայրները, քոյրերը, հօգեդայրներն ազատ են իրանց աշխատանքի և ապրուստի մէջ, մէկը միւսի համար հողաւոր պարտքը չէ զգում, ամեն մէկը պարտական է ինչպէս մեր ժողովուրդն ասում է՝ զի գլխի ձէնն անելու ծանր դուրս աշխատող որդին, եթէ առիթ է ունենում հայրենական տունը գալ մի քանի օրով, նա սիրով վճարում է իր կերածի վարձն իր հօրն ու մօրը. նոյն բանն է անում եղբայրը եղբօր վերաբերմամբ, քոյրը քրոջ վերաբերմամբ: Արեւ-

եան հիւրասիրութեան մասին սրանք զազաւար անգամ չունեն: Այստեղ ապրում են լեռնով, որ հայ գիւղացին սիրով յանձն է առնում օտարականին իր տանը շարժով, ամսով հիւր պահել՝ առանց ոչինչ պահանջելու: Այստեղ իւրաքանչիւր անձը պիտի ապրի իր խելով և ձեռքով և իր ունեցած ընդունակութիւնների համեմատ էլ կամ լաւ է ապրում, կամ վատ. առաջին դէպքում իր մեծաւորները նրանից ոչինչ չեն պահանջում, երկրորդ դէպքում ոչինչ չեն տալիս: Հօրից, մօրից որք մնացած մի հատիկ աղիկը, որ ապահովված հօրեղբայր ունի, մի օրու պէ անգամ չէ մտածում նրա օգնութեանը դիմել: Նրա հովանաւորութեան տակ մտնել, նա ապաւինում է միայն իր սեփական ոյժերին, սեփական ընդունակութիւններին և ապրում է միայնակ իր սեփական աշխատանքով: Հօրեղբայրն էլ ոչ մի պարտք չէ զգում դէպի նրան:

Այստեղ ոչ մի պարագլուխ, ոչ մի արուեստ, ոչ մի աշխատանք արժամարձված, ստոր, խտեւել չէ համարվում, եթէ նա ծառայում է ինչպէս պատուաւոր միջոց պարտուած հայկազնիւ. ամեն ոք հպարտ է իր արուեստով, իր կոչումով, իր պարագլուխքով. փողոցները սրբող թշուառական անգամ այնպէս է նայում իր աւելին, ինչպէս զինուորականն իր սրին: Այժմ մի վաճառական չի մտած իրան վեր դասել կոչակալից կամ նոյն իսկ կառավարից, սրանց պարագլուխքն արժամարձանքով իշխել: Ո՛վ չէ տեսել մեր քաղաքների համայնքներն, մէջքներին համէտ դրած այն ողորմելի մարդկանց, որոնք այնպէս կորած են կեղտի ու մրի մէջ և մի քանի

կոպէկ վաճառակիւն համար տնքալով՝ տաս տակ ծաղկում են աշակին բնուի տակ: Այդ թշուառները երևակայել անգամ չեն կարող, որ իրանց եղբայրակիցները—երօպացի կօլիզները, մի յարգելի դասակարգ են կազմում, ազատ և բարձր այն արժամարձանքից, որին ենթակայ են ասիացի համայնքը: Սրանք այստեղ մաքուր հագնված են, սպիտակ շապկով և մաքուր փողպատով, փոքրիկ ձեռքի սայլակը պարտաւոր, տեղափոխում են իրեն, առանց շալակելու, առանց անբալու, առանց արժամարձակելու: Ճշմարիտ է, սա էլ բեռնակիր է և իր պարագլուխքին վերաբերալ ամեն տեսակ ծառայութիւններ կը մատուցանի ձեզ սիրով, բայց միշտ իր մարդկային արժանապատուութիւնը բարձր պահելով, առանց ստորանալու, առանց խնդրելու. և իր աշխատանքի արդէն որոշուած վարձը կըստանայ՝ Շնորհակալ եմ, պարտն, կասի և կը հեռանայ. բայց փորձեցէք նրան արժամարձանքով վերաբերվել, ինչպէս վարվում էք ասիացի համայնքի հետ, մի ծանր նախադասական խօսք ասացէք կամ դիմեցէք նրան առանց «պարտն» խօսքի, նա ձեզ քաղաքավարութեան այնպիսի դաս կը տալ, որ յաւիտեան չէք մոռանայ:

Ձանազան աշխատութիւնների մէջ կանայք յետ չեն մնում տղամարդկանցից. մարդ և կին, շատ անգամ իրանց աղջկին էլ հետնեքը, փոխառ փոխ կառավարում են խանութը. կան մագաղաններ, բացառապէս կանանց հսկողութեան ներքոյ, և նրանք վաճառում են ամեն տեսակ ապրանքներ: Նա զարմանքով տեսայ նաև միս վաճառող կանայք և աղջկանք. ձշմարիտ, բա-

ծու, որ բաղկացած է Շառլոտ Գառուտի գործածվող ներկերու դանդաղան ներկերից և բոյսերից: Տէր-Յովնանիսեան, մանրամասն չարք ու փորձ անելով, կազմել է ներկայ ներկերի պատրաստելու նկարագրութիւնը: Վովկասեան Գրիգորիանեան ընկերութիւնը ժողովրդէն է այդ նկարագրութիւնը տալ տպագրութեան, իսկ ուղարկած ժողովածուն յանձնել տնայնագործական մասնագործի քննութեան:

Մեր խմբագրութեան մէջ ստացված են հետեւեալ նոր գրքերը. 1) «L'univers et sa formation» (Տիեզերքը և նրա կազմութիւնը), հեղինակութիւնը զորոք Տաղաւարեան, Կ. Պոլիս, 1898 թ. գինը 2 ֆրանկ. 2) «Առողջապահութիւնը առանձին ի պէտս ազգային երկրորդական վարժարանաց», դրեց զօր. Տաղաւարեան, Կ. Պոլիս, 1898 թ. գինը 2 րուբլի. 3) «Առավելական մրմունջներ», ժողովրդական երգեր և պարեր, լուրագրից զարկ Սրշակ Բրուսեան, երկրորդ տպագրութիւն, Ալեքսանդրօպոլ, 1898 թ. գինը 60 կոպէկ. 4) «Руководство для изучения армянского языка. Самоучитель», կազմեց Կ. Տաղաւարեան, թիֆլիս 1898 թ. գինը 80 կ. 5) «Պատկերազարդ—Լիակատար Տարեցոյց 1899 թ.», Մակար Չալկեանի, թիֆլիս, 1898 թ. գինը 30 կոպէկ. 6) «Письмо Шейда-Бека. Шпрвани, ссг. Гониёва», թուրքերէն, Բագու, 1898 թ. գինը 12 կ. 7) «Փորթիկ լորդի պատմութիւնը», վէպիկ Յրէնիս Բերէնէտի, լուրագրութիւն Գ. Բագու. պատկերազարդ, Բագու, 1898 թ. գինը 1 ր. 25 կ. 8) «Նոր երգարան» Թաւադիսի, թիֆլիս, 1898 թ. գինը 1 րուբլի. 9) «Շնունդ», վէպիկ Ատրպետի, Նոր-Նախիջևան, 1898 թ. գինը 30 կ.:

Մեզ հաստատու են, որ ուրբաթ, դեկտեմբերի 11-ին, վրաց կալուածական թաղարմու տիկին Զարէլ տալու է հայերէն մի ներկայացում: Խաղալու են Ալեքսանդրօպոլի «На жизненном пути» կոմէդիան:

ՆՈՐ-ՔՈՍՏԱՆԵՍԻՑ մեզ գրում են. «Դեկտեմբերի 1-ին մեր վիճակի գործակալ Մատթէոս վարդապետ Մատթէոսեան տաննաձեկ ամիս պաշտօնավարելից յետոյ, ուղևորվեց դէպի թիֆլիս և այնտեղից՝ Գանձակ, ուր յայտնող է նշանակված: Մենք ցաւում ենք, որ մեր բազմաթիւ վիճակը դրկւում է մի օրինակելի հոգևորականից: Մատթէոս վարդապետը մինն է մեր ներկայ ինտելլիգենտ հոգևորականներից, որոնք ճշմարտութեան, ճշգրտագիտութեան և անկեղծութեան նուիրված լինելով, ազդեցիկ և հեղինակաւոր են լինում իրանց շրջապատող ժողովրդի մէջ: Մի տարուց քիչ մնալով մեզ ժող, նա լաւ ուղղութիւն տուցեց մեր վիճակի հոգևորական կրօնական գործերին, մոլթ մնացած գործեր և դեղծունեներ լայն հանեց, բանաստեղծից ուսանց ամաչացրեց, ուսանց զգուշացրեց: Նրա հետանալով մեր վիճակը դրկւեց մի բարեխղճ, գործունեայ երիտասարդ վարդապետից:

ՍՂՆԱԽԻՑ մեզ գրում են. «Նոյեմբերի 29-ին մալականների Ալեքսանդրօպոլ գիւղում առասաց հոգևորականութիւնը, մեծ հանդէսով, բաց արեց գիւղական ուսումնարան երկու սեռի երեխաների համար: Բացման ներկայ էին՝ Բոգրէի Ս. Նուռէի վանքի մայրպետ՝ Իւլիանայի իր երգեցիկ կոյսերով, Սքնախի գաւառապետը և երկու սեռի բազմաթիւ հասարակութիւն: Ս. Նուռէի վանքի քանանայ՝ Միրիանով ճառ խօսեց՝ ուսման կարևորութեան մասին: Աւսումնարանը պէտք է լինի յիշեալ մայրապետի հսկողութեան տակ:

ՂԱՄԱՐՈՒԹՅՈՒՆ մեզ գրում են. «Մեր գիւղական չարչի գալովանքը վերջապէս այնքան զգուշացրին ժողովրդին իրանց չափարութեամբ և խռովարար բնաւորութեամբ, որ այսօր, ընտրութիւններին, նրանց անունը չէ լսվում, կամ թէ լսվում էլ է, փառաւորապէս սեանում է: Անցեալի դարը փորձը տրամադրեց ժողովրդին իրավասութեամբ գործերը՝ նա հասկացաւ իր սխալը: Մեր հարեան Օրբէկլու գիւղի հասարակութիւնը նոյեմբերի 29-ին, գալապալ ընտրեց Գրիգոր Տէր-Վարդանեանին, միջնակարգ կրթութեամբ մի մարդու, որ երկար տարիներ թէ ջաղաքներում և թէ գիւղերում վարել է ուսուցչական պաշտօն: Անկասկած, մեծ յոյսեր ունի ժողովուրդը նորընտիր կրթված գալապալի վրա: Ի սրտէս յայտնութիւն ենք ցանկանում յիշեալ պարոնին: Մեր գաւառի տարեգրութեան մէջ դա առաջին դէպքն է, և ցանկալի է լինէր, որ այդ դէպքը օրինակելի դառնար և միւս գիւղերի համար:

ԱՆԻՔՍՈՒՐՈՒԹՅՈՒՆ մեզ գրում են. «Սրանից չորս տարի առաջ Տէր-Ստեփանով ամուսնով մի պարոն թիֆլիսից եկաւ և բաց արաւ մեզ ժողպանսիս-ուսումնարան. բայց երեք ամսից յետոյ տեղափոխվեց Նրեան, այնպէս որ այժմ շատ դժուար է մի ուսումնարան-պանսիսի գոյութիւնը, աչքի առաջ ունենալով, որ ազգաբնակչութիւնը գուրկ է ուսումնարանից: Այստեղ ապրում են 35 հազար բնակիչներ, բայց չը կայ ոչ բնակական դպրոց, ոչ արհեստագիտական դպրոց և ոչ դիմնալիս:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԴՈՒՆԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԹԻՒՐԿԻՍՏԱՆՈՒ

Հազիւ թիւրքիսն—գրում է «НОВОСТИ» լրագրի թղթակիցը—վերջացնում է մի հարց, որ իսկոյն ծագում է մի ուրիշը: Նոյեմբերի 20-ին, Նըղդ-Բիսուկում մարշալները մեծ ժողով էր գումարվել սուլթանի նախագահութեամբ: Ժողովը տեղի առաւօտեան ժամը 7-ից մինչև ժամը 1-ը: Այդտեղ քննուեց էին թէ ինչ արտակարգ միջոցներ պէտք է ձեռք առնել Արաբիայի համար, որ պատմաբանութիւնն արդէն արեւմտեղ ընդհարումներ է առաջացրել օսմանեան դրքի և Նեմէի ու Հեջազի դանդաղան ցեղերի մէջ: Անհրաժեշտ է որ և է միջոց ձեռք առնել կարգը վերականգնելու համար Արաբիայում, բայց ոչ որ չը դիտէ, թէ ինչ պէտք է ձեռնարկել: Խիստ միջոցների գործադրութիւնից վախեցում են, որովհետեւ այն ժամանակ Արաբիայի ազգաբնակչութեան անշտոված մասերը կը միանան և ընդհանուր սլովով կը դիմադրեն թշնամուրն: Բացի դրանից թիւրքիսն պէտք է աչքի առաջ ունենայ և ֆինանսական նկատումներ, առանց այն էլ Արաբիան և Նեմէն մեծ ծախքեր են կրանում թիւրքիսից: Այդ երկրները յայտնապէս ձգտում են Կրեմլին օրինակել—կամենում են բաժանվել թիւրքիսից: Թիւրքիսն շարունակ կատակում է, թէ իրը Անդլիայի մասը խառն է այդ անհնարաւ պատմաբանութիւնների մէջ, որովհետեւ յայտնի է, որ Անդլիան Կարմիր ծովի և Պարսից ծոցի ափերի վրա գործակալներ է մի արեղջ գտնող է պահում:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԿԻՍՏԱՆՈՒ

Կ. Պոլիս, նոյեմբերի 18-ին
Ինչպէս դիտել արդէն, հոչակաւոր թրքաւոր Սըր Աշմէլ Բարլէկ՝ անդամ անդլիական խորհրդարանին, արտօնութիւն խնդրած էր Օսմանեան կառավարութիւնէն՝ պետութեան զիւարար քաղաքները ելեկտրական լուսով լուսաւորելու: Սուլթանը հաստատու էր կերպով խօսք տուաւ, որ երբ իր երկրներուն մէջ ելեկտրական լուսի գործածութիւնն ընդհանրացնելու վերջնական որոշումը տալ՝ այդ արտօնութիւնը, բայց Սըլմէլ Բարլէկէն ոչ որը չորսէ: Թուրքաց խալիֆային կողմանէ թուրք պետութեան անձնուէր բարեկամի մը տրուած այս խոստումը սատարի ստանալով լուսով պատճառած է հիմա «Deutsch-Bank»-ի տեսչութեան, վաճառի սն իր բաժնեկիցներուն արդէն ծանուցել էր՝ թէ Կ. Պոլիսն ելեկտրական լուսով լուսաւորելու համար հարկ եղած արտօնադրին առած ու պահած է:

Սուլթանը, որ ելեկտրականութիւնէն այնքան չի ստուար՝ որքան կը դալայ անոր լոյսէն, լաւ պատրուակ մը բռնելով այս, այսօր մէկուն՝ վաղը միւսին կը խոստանայ և այսպէս ձգձգելով անգործադրելութեան կը մատնէ: Այս եճով յետաձգուած են, հասարակաց օգտին ի նպաստ պահանջուած, այս կարգի շատ մը արտօնութիւններ:

Թուրքիայի գործակաւոր՝ պ. Մարիօֆ կը պատրաստուի հրաժարական տալ: Կըսուի թէ Օսմանեան կառավարութիւնն հաստատ աղբիւրներէ տեղեկացել է, որ պ. Մարիօֆ՝ մակեդոնական կոմիտէին կը գործակցի եղբւր այդ երկրին մէջ նոր խռովութիւնները յառաջ բերելու համար: Թուրքական պաշտպանութեան ներքեւ գրուող Վալաքները իրաւունք տուցան Սերէզի (Մակեդոնիա) և ուրիշ փոքր քաղաքներու մէջ դպրոցներ բանալու՝ հակառակ այն բողոքներուն, որ բեր էր Կապոօրիայի յոյս օրթոգոքս մէտօրօթիւրը՝ կառնցելու համար Վալաքներուն այդ չարմուր: Սուս կողմանէ՝ չորսին այն ջանքերուն, որ ի գործ կը դրուին առանձնական պրօպագանդի կողմանէ, անշուշտ ի մօտոյ պիտի վայելեւը, մայրաքաղաքին մէջ, առանձնական ժողովուրդային հոժ գաղթականութիւն մ'աւ, արդէն այս օրերս տեղի պիտի ունենայ ուսման կղարկարարանի նորակաւոյց եկեղեցւոյն օժուրը:

Վիլհելմ II՝ թէպէտ հասած է ի Բերլին, սակայն մայրաքաղաքին մէջ տակաւին շատ կը խօսուի ն. վեհափառութեան վրայ, որ ընաւ աւանջ չի դնելով տարածուած երկրիւններուն՝

այնքան յաջող կերպով և անվտանգ աւարտեց իր ուղևորական շրջանը: Կեա նոր կը յայտնուին երկու դէպքեր, որ ն. վեհափառութեան մայրաքաղաք գտնուած միջոցին բաւական յուզում պատճառեց են և որոց վրայ կատարեալ լուսութիւն պահեց գերմանական ժամուրը:

Կրենն՝ թէ կայսերական զոյգը երբ Գոլմա-Բախլէի պալատէն Նըղդ-Քէօզի երթալու համար ճամբայ ելել է՝ խեղճ քուրդ մը, սպրդելով մօտեցել է այն կառքին, ուր քաղմեր էին սուլթանը և կայսերական զոյգը, որ քուրդին յանկարծ երենալէն ալ յայլմէ եղած՝ սատարի վախցեր և սլովով մը ետ հրեր է անոր ձեռքը: Ակնթարթ վայրկեանի մէջ սակայն ձեքեակաւոր է բուրդին և չարաքար կերպով սպանուելու: Իսկ երկրորդ դէպքը, ուրբաթ օր, Սէլամլըքի արարողութիւնէն յետոյ, Մալա-Քէօզիի առջև, զօրահանդէսի ժամանակ տեղի ունեցել է, և, կրենն թէ, խորհրդով եղած բան մ'էր: Արքայ-Համիդ՝ իր կայսերական հրերուն հետ, Մալա-Քէօզիի պատահաններէն զօրահանդէսը դիտած ժամանակ, ճիշդ այն պահուն՝ ուր այցահանդէսը պիտի սկսի եղբւր, Քէօզիին պատահաններուն տակ յանկարծ վրիլով մը բողբեր և տեսուել է, որ գլուխը ձեքեակ փափիոցաւոր մարդ մը չարաչար կը գնաւորուի: Ան ու սարսափը պատեր են Քէօզիին մէջ, բայց իսկոյն բարձրատրիճան անձ մը վաղելով—բան չի կայ—ըսել է—մարդուն մէկը նորին կայսերական վեհափառութեան խնդրադիր մը պիտի մատուցանէր՝ թոյլ չի տուիլը:

Մեծ-կապրդու խալի Բիֆաղ-փաշա հաճելի չեղաւ գերմաններուն: Գերմանական ժամուրը, մէկ քանի չաքաթ կայ, որ պայքար կը մղէ ընդդէմ այս մարդուն և կրոն՝ թէ սուլթանը վստահութիւն չունի անոր վրա, և, անկուր մօտաւորտ նկատելով, իրեն հաւանական ընտրելներ կը ներկայացնէ՝ Կրեննէն նախորդ կուսակալ Ջէվադ-փաշան, ներքին գործոց նախարար Մէմ-դուլ-փաշան և արտաքին գործոց նախարար և Բերլինի օսմանեան նախորդ դեսպան՝ Քէլֆիդ փաշան: Վիլհելմ II-ի մայրաքաղաք գալէն ի վեր գերմանեան ժամուրն սկսած է աւելի խիստ կերպով յարձակիլ խալի-Բիֆաղ-փաշայի դէմ և մեծ կարևորութիւն տալ Ջէվադ-փաշայի և առաջինին անկումը ու երկրորդին անուանումն իրեն կատարուած իրադրութիւն ներկայացնել: Բայց Բիֆաղ-փաշա, հակառակ գերման ժամուրնի փութիկոտ յայտարարութեանց, տակաւին կը մնայ իր պաշտօնին գլուխը և Ջէվադ-փաշա պիտի հեռացուի Պոլսէն, ինչպէս կը հաւատան, Դամասկոսի կուսակալ անուանելով՝ իրեն չարաչար քաղաք Բայց Նաղմ-փաշան ինչ պիտի լինի... մի գուցէ ֆրանսիական դեսպան պ. Կամպոնի հետանալով՝ Նաղմը սկսի մօտենալ եպարքոսական թիւրք առնելու...:

Սա ձեւարկու է՝ որ եթէ Ջէվադ կամ վերոյիշեալ փաշաներէն մէկը չի յայտնի իսկ սարքազամ լինել, խալի-Բիֆաղ փաշա թիւրք պաշտօնական շրջանակին մէջ ալ կրուսած է իր վարկը, և, տարակոյս չի կայ, որ Նըղդը մէջ ալ արձագանք պիտի գտնէ, նոյն իսկ կը հաւատան, թէ Նըղդը մէջ Հաճի-Օսման-փաշայի համար կը խօսուի եղբւր, մինչև անգամ կը մտադրվի Նաղմը բերել ու տարաբան ընել. բայց այս ամենը utopie-ներ են. այն կը լինի սաղաղամը՝ որ սուլթանին հաճոյակատար լինելէ զատ՝ ուրիշ բան չը գիտէր՝ երկրորդ խալի-Բիֆաղ մը:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Անդլիայի և Ֆրանսիայի մէջ եղած սառն յարաբերութիւնները անկել լարվելցին վերջերս Պարիզի անդլիական դեսպան Մօնտօնի արտասանած ճառի պատճառով: Մօնտօն չօչափեց Անդլիայի և Ֆրանսիայի մէջ եղած յարաբերութիւնների հարցը և շատ աննշատ կարծիք յայտնեց ֆրանսիական մամուլի, ֆրանսիական քաղաքական ճառագիտութեան և Վերմանտի միջոցների մասին, որոնք վաղանցիկ ժողովրդականութիւնն ձեռք բերելու համար գործադրում են Անդլիայի վերաբերմամբ «գիտասերի խալիցի» քաղաքականութիւնը: Սըր Մօնտօն մինչև անգամ չը բաշխեց սպառնալ Ֆրանսիային, որ եթէ նա չը դադարի արդեւները յարուսնել խալիցի քաղաքականութեան դէմ իր հնչելն անդլիականութիւններով, Անդլիան ստիպված կը լինի այնպիսի միջոցների դիմել, որոնք իրան էլ դուր չեն կայ ֆրանսիական ազգին: Կալուստիական տարեգրութիւնների մէջ մի անօրինակ դէպք է Մօնտօնի արտասանած ճառը: Հաւանալի է որքան, որ Մօնտօնի ճառը ընդհանուր զարդիք առաջ բերեց Ֆրանսիայում և երթարկվեց մամուլի խիստ յարձակութեան: Մօնտօն շտապեց ներողութիւն խնդրել ֆրանսիական արտաքին գործերի միջոցներից և ցաւ յայտնել, որ «չէ կարողացել լաւ բացատրել իր միտքը: Մի երկու օրից յետոյ նոյն

դեսպանը մի այլ ճառի մէջ բարձրովին փոխեց իր լեզուն և սկսեց զովել Ֆրանսիան:

—Պարիզից հեռացրում են, որ Ալթիլում տարածվող հակառակութեան թերթերն արգելվել են: Կիւպիլի յայտնել է, որ իր կարծիքով, հակառակութեան թերթն ամօթալի և վտանգաւոր երևոյթ է ներկայացնում:

—Լօնդօնից հեռացրում են, որ Հարկուրտ, մի նամակ ուղղելով Մօրլէին, յայտնում է, թէ նա հրաժարվում է ազատամարտ կուսակցութեան ղեկավարութիւնից, ի նկատի ունենալով, որ նրան մեղադրում են, իր թէ նա գործում է անձնական նպատակների համար: Ննթաղրում են, որ ազատամարտ կուսակցութեան դուրս կը կանգնի լորդ Բօլբլէի:

—Որովհետեւ Ֆրիլպպեան կղզիների ապստամբները չեն ուղարկում իրանց զինքը վայր դնել, նախագահ Մակ-Վինլէ մի յայտարարութիւն հրատարակեց, որով պահանջում է կղզիների ազգաբնակչութիւնից՝ զինաթափ լինել և վերադառնալ խաղաղ դաշտունքներին:

—«Memorial Diplomatique» լրագրից հաղորդում է, որ անարխիստների մասին Հոսթում կայացած կոնֆերանսին կատարեալ անադուլութեան ենթարկվեց: Բոլոր այն հարցերը, որոնք առաջարկվել էին անիլիստականութիւնը զսպելու նպատակով, նախըն աղուծելի և ոչ մի արձանագրութիւն էլ չը ստորագրվեց:

—Ֆրիլպպեան կղզիների բնիկները ազատվելով սպանիական լուծից, սարսափելի կերպով վրէժ են լուծում իրանց նախկին հարստահարիչներից: «New-York-Nerald» ամերիկական լրագրից յայտնում է, որ ապստամբները վեց միլիոն են պահանջում իրանց իշխանութեան տակ գտնված կաթօլիկ հոգևորականների համար: Նրանց ժող դերի են մինչև այժմ հարկեր դօմինիկեան կրօնաւորները, որոնց մէջ է Յովսէփ Կամպօմարէս եպիսկոպոսը: Այդ կրօնաւորները ենթարկվում են անկարագրելի տանջանքների: Նրանց ապստամբ են, ձեռնում են, դանակուծում են, թրքում են երեսներին: մի բանին ընթից չունան անցկացնելով քաջ են տալիս: Պէտք է ասել, որ դոմինիկեան կրօնաւորները, ահապիս կալուածներն ունենալով կղզիներում, շատ վատ էին վարվում սեղական ժողովրդի հետ:

—Օսմանեան կառավարութիւնը, ինչպէս հաղորդում են Բերլինի լրագրից, պատուիրել է Կրուպկը գործարարին հազար հրացայտ գործիք արտիլերիայի համար:

—Ամերիկական մի բանի լրագրից խօսքով, Միացեալ-Նահանգների նախկին դեսպան Սիւսմուս, այցելելով Պէկինը և չինական ուրիշ նաւահանգիստները, գործերի դրութիւնը շատ կրիտիկական է գտնում այդ նաւահանգիստներում: Նրա կարծիքով, Մանչուրիան արդէն պէտք է առասաց նահանգ համարել և Նիւ-Չանգ, գլխաւոր նաւահանգիստը ամերիկական արդիւնների ներմուծման համար Ձիւնատանի հիւսիսում, կարող է մի գեղեցիկ օր փակվել ամերիկացիների համար: Ամերիկական և անգլիական շահերը պաշտպանելու միակ միջոցն է՝ գործել անպաղտ և ստիպել չինական կառավարութեանը՝ մտցնել պետութեան ամբողջութիւնը պահպանելու համար, անհրաժեշտ բեֆօրմներ: Նոյնպէս և Անգլիայի ու Միացեալ-Նահանգների շահերի տեսակետից պէտք է չը թող տալ, որ նաւահանգիստները զիջվեն օտար պետութիւններին և մտցնել բազմ զանազան քաղաքականութիւնը ամբողջ Ձիւնատանիում: Ամերիկական նախկին դեսպանը կարծում է, որ Միացեալ-Նահանգների և Անգլիայի միաբան գործողութիւնը կարող է Ձիւնատանի բաժանման առաջին առնել:

ԻՍԱՌԵ ԼՈՒՐԵՐ

Յուզված են Բեկուչի ստանուած Մի բանի ժամանակից գործերի դրութիւնը Բեկուչիստանում իր վրա է դարձնում նորից անգլո-հնդկական կառավարութեան ուշադրութիւնը: Կեպտի այժման խանը, որը ուժիկ է ստանում անգլիացիներից, ամենեկին սիրված չէ իր հպատակներից և մի և նոյն ժամանակ այնքան թոյլ է, որ չեն վախենում նրանից: Նորեւս բանի կերպով խանի հարեւր տարան Կեպտի բարձրատրիճան պաշտօնականները մի բանի աղիկները: Կապ իմացվեց, որ այդ թշուառ աղիկները սպանվել են: Նրեի այդ փառան է յուզմունքների սկզբնապատճառը: Թէպէտ բրիտանական Հնդկաստանի կառավարութիւնն աշխատում է գաղտնի պահել իր գործունէութեան եղանակը և խառնութիւնից ստացվող լուրերը բռնում է, բայց մի բանի լրագրից յայտնում են, թէ երկրի տրամադրութիւնը այնպէս է, որ ձգնաժամ, երեւի, հեռու չէ:

ՄՇԱԿԻ՝ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՑ

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 7 դեկտեմբերի: Դեկտեմբերի 6-ին երկու մայրաքաղաքները բոլոր տաճարներում և բոլոր քաղաքներում մաղթանքներ կատարվեցին Ռազաւոր Կայսրի արեւատութեան համար:

ՅԱՄՍ, 7 դեկտեմբերի: Նորին Մեծութեան անուանակոչութեան հանդիսաւոր օրը Մեծ պալատի սեղանատանը Լիվադիայում հանդիսաւոր նախաճաշ կայացաւ 70 անձանց համար, Բարձրագոյն ներկայացեալ չորսը: Հրապարակները թրուում կային Ռազաւորի սկիւտան, Լիվադիայում

Типографія Грузинск. Издат. Т—ва, Лорисъ-Мелик. ул. № 13.